

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>


ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱԿՈՔ ԴԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԼԵՈՂՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ



ԵՐԵՎԱՆ
2015

ՀԱԿՈՒ ԴԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ ՈՒ

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ

ԵՐԵՎԱՆ
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ
2015

ՀՏԴ 332(03)
ԳԴԴ 65.9 ց2
Ղ 287

«Տեղեկատվություն» տպագրության է երաշխավորվել Արցախի գիտական կենտրոնի ԳԽ 08.07.2014թ. թիվ 21 և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ԳԽ 23.12.2014թ. թիվ 232/14 որոշումների համաձայն

Գրախոսներ

տնտ.-գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս	ՅՈՒ.Մ. Սուվարյան
տեխն. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	Հ.Վ. Թոքմաջյան
ԼՂՀ կրթության և գիտության նախարար	Ս.Ա. Ասրյան
տնտ.-գիտ. թեկնածու, դոցենտ	Մ.Մ. Մինասյան
Խմբագիր՝ Բ.Գ.Թ. դոցենտ	Հ.Ց. Պետրոսյան

Ղահրամանյան Հ.Շ.

Ղ 287 Տեղեկատու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ- տնտեսական բնութագրերի: Տեղեկատու / Հ.Շ. Ղահրամանյան; ՀԱՊՀ.- Եր., Ճարտարագետ, 2015.- 396 էջ:

Ավելի քան երկու տասնամյակ Արցախի Հանրապետությունը կառուցում և կայացնում է իր պետականությունը՝ աշխարհի քաղաքակիրթ պետություններին հարիր բոլոր ինստիտուտների ներդրման ու զարգացման միջոցով:

Խորհրդային տարիներից Ադրբեջանի հայատյաց քաղաքականության արդյունքում ԼՂՀ-ն ստացել է արքատ ժառանգություն, թե՛ տնտեսության և նրա կառուցվածքի, թե՛ մշակութային և պատմական, թե այլ ոլորտների ուղղությամբ: Ելնելով Արցախի Հանրապետության ներուժի գնահատման և նրա հետագա զարգացումն արագացնելու անհրաժեշտությունից՝ հեղինակը փորձ է արել մշակել և ամփոփել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական բնութագրերը՝ նպատակ ունենալով հանրությանը մատուցել ամփոփ տեղեկություններ, ինչը հնարավորություն կտա ընդհանուր պատկերացում կազմել հանրապետության շրջանների, քաղաքների, համայնքների, գյուղերի մասին:

Հեղինակը հուսով է, որ տեղեկատուն օգտակար կլինի հասարակության լայն շրջաններին, հատկապես ձեռնարկատիրական գործունեության սկսնակներին, ներդրումային բնագավառում քաղաքականություն մշակողներին, ուսումնասիրություններ իրականացնողներին, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավման ծրագրեր կազմողներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնտեսական ու սոցիալական գործընթացները ուսումնասիրողներին:

Իբրև առաջին փորձ՝ սույն տեղեկատուն կարող է գերծ չլինել թերություններից ու բացթողումներից. հեղինակն ակնկալում է ընթերցողների արժեքավոր դիտողություններն ու առաջարկությունները:

Հեղինակը երախտապարտ է տեղեկատուի մշակմանը մասնակցած, փորձաքննություն իրականացրած և տպագրությունը կազմակերպած անձանց:

ՀՏԴ 332(03)
ԳԴԴ 65.9 ց2

ISBN 978-9939-72-184-2

© Ճարտարագետ 2015
© Ղահրամանյան Հ.Շ. 2015

Տեղեկագրուի պատրաստմանը մասնակցել են.

Աշխարհագրություն և սոցիալ-տնտեսական ցուցանիշներ

ԼՂՀ արտադրական ենթակառուցվածքների նախարարության ճյուղային բնագավառների կառավարման բաժինների պետեր և պատասխանատուներ՝ **Արմեն Ներսիսյան**, Նելսոն Պողոսյան, Կարեն Գրիգորյան, Արայիկ Պողոսյան, Իլգա Ավթանդիլյան:

Աշխարհագրական տվյալները տրամադրվել են.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման և վերաբնակեցման վարչության կողմից:

Բնական պաշարների և օգտակար հանածոների մասին տեղեկությունները տրամադրվել են.

Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի խորհրդական, ակադեմիկոս **Գրիգորի Գաբրիելյանի** կողմից:

Քարտեզները կազմվել են.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից (նշագրված չեն 2005թ. հետո կազմավորված բնակավայրերը):

Կրթություն, մշակույթ, պատմություն

Կրթության և մշակույթային արժեքների մասին տեղեկությունների համար հիմք են հանդիսացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերն ու ամփոփագրերը:

Պատմական հուշարձանների և եկեղեցիների մասին տեղեկությունները տրամադրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, ԱրՊՀ պատմության ամբիոնի ավագ դասախոս **Լեռնիկ Հովհաննիսյանի** կողմից:

Խմբագրում, սրբագրություն և համակարգչային մշակում

Հասմիկ Պետրոսյան, Մերի Ղազարյան, Գոռ Հակոբյան

Տպագրություն

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼԵՈՒՆՅԻՆ ՂԱՐԿԱՐԴԻ ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆ

Վարչական քարտեզ



Արդեանի վիճակագրության տարածքային կազմակերպություն
 Շխ. Վարչական կենտրոնները տրված են կարմիր գույնով

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Լեոնային Ղարաքաղի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է, որը ստեղծվել է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, 1991թ. սեպտեմբերի 2-ին: 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով հռչակվել է որպես անկախ հանրապետություն և այդուհետ ինքնուրույն կերպով է որոշում այլ պետությունների հետ համագործակցությունը, այդ թվում՝ տնտեսական հարաբերությունների ձևավորման առաջնահերթությունները:

Այժմյան Լեոնային Ղարաքաղի Հանրապետությունը զբաղեցնում է պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկի՝ Արցախի տարածքի լեոնային մասը:

Առաջին անգամ Արցախը ՌԻրդեխե կամ ՌԻրդեխինի (Արդեխունի) անուններով հիշատակվում է ուրարտական հնագույն սեպագիր արձանագրություններում:

Տարածքային որոշ տարբերություններով՝ հայկական այդ նահանգը՝ Արցախը, պատմական տարբեր ժամանակահատվածում կոչվել է Առան, Արցախ, Արդախ, Արձախ, Արձախա աշխարհ, Արցախամար աշխարհ, Խաչեն, Խաչենք, Փոքր Սյունիք, ավելի ուշ՝ Ղարաքաղ:

Լեոնային Ղարաքաղի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին:

Ազգային արժույթը հայկական դրամն է, որը շահառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերին:

Լեոնային Ղարաքաղի Հանրապետության Ազգային ժողովի 1998թ. հունիսի 26-ի որոշմամբ (հետագա փոփոխություններով) հաստատվեց Լեոնային Ղարաքաղի Հանրապետության ներկա վարչատարածքային կառուցվածքը՝ բաղկացած 7 վարչական շրջաններից (Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Շահումյանի, Շուշիի, Քաշաթաղի) և վարչական շրջանի կարգավիճակ ունեցող Ստեփանակերտ քաղաքից: Հանրապետության համայնքների թիվը 264 է, որից փաստացի գործում է 229 համայնք, 17-ը^{*1} ժամանակավորապես գտնվում են հակառակորդի վերահսկողության տակ, 19^{**2}-ը ռազմական գործողություններից հետո դեռևս բնակեցված չեն: Իսկ բնակավայրերի թիվը 380 է, որից փաստացի գործում է 318 բնակավայր, 30-ը^{*1} ժամանակավորապես գտնվում են հակառակորդի վերահսկողության տակ, 33^{**2}-ը ռազմական գործողություններից

^{*1} Այս բնակավայրերի անվանումները տե՛ս «Ցանկում»:

^{**2} Նշված բնակավայրերի անվանումները տե՛ս «Ցանկում»:

հետո դեռևս բնակեցված չեն: Քաղաքները թվով 12 են՝ Ստեփանակերտ (մայրաքաղաք), Շուշի, Մարտակերտ, Մարտունի, Ասկերան, Հաղրուփ, Քարվաճառ, Բերձոր, Միջնաձևան, Կովսական, Որոտան և Ճարտար:

Հանրապետության բնակչության թվաքանակը կազմում է 150890 մարդ, որից 150 533-ը՝ հայեր, 171-ը՝ ռուսներ, 21-ը՝ ուկրաինացիներ, 22-ը՝ հույներ, 12-ը՝ վրացիներ, 6-ը՝ ադրբեջանցիներ, ընդ որում՝ 48,2 տոկոսը տղամարդ և 51,8 տոկոսը կին, կա 41011 տնտեսություն:

Հանրապետության մայրաքաղաքը Ստեփանակերտն է, վարչական շրջանային կենտրոններն են (այսուհետ՝ շրջկենտրոն) Ասկերան, Հաղրուփ, Մարտակերտ, Մարտունի, Քարվաճառ, Շուշի, Բերձոր քաղաքները, որոնք մայրաքաղաքից գտնվում են համապատասխանաբար 15կմ (ճանապարհը ասֆալտապատ է), 72կմ (ճանապարհը ասֆալտապատ է), 52կմ (ճանապարհը ասֆալտապատ է), 58կմ (ճանապարհը ասֆալտապատ է), 125կմ (ճանապարհը ասֆալտապատ, բնահողային, խճից և կոպճից է), 11կմ (ճանապարհը ասֆալտապատ է), 50կմ (ճանապարհը ասֆալտապատ է) հեռավորությունների վրա:

Արցախը Մայր Հայաստանի հետ կապվում է Քաշաթաղի շրջանի տարածքով անցնող ավտոմայրուղու միջոցով, որը կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով:

Սկսվել է Հյուսիս-Հարավ, Վարդենիս-Մարտակերտ շրջանաձև ավտոմայրուղու շինարարությունը, որը նույնպես կառուցվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով և նախատեսվում է ավարտին հասցնել 2016 թվականին:

Աշխարհագրական դիրքը. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գտնվում է Փոքր Կովկասի հարավարևելյան մասում: Հանրապետությունը հյուսիսից և արևելքից սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը, հարավից՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը և արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետությանը:

Հանրապետության տարածքը տիպիկ լեռնային է և ընդգրկում է Ղարաբաղյան բարձրավանդակի արևելյան հատվածն ու արևմուտքից թեքությամբ իջնում դեպի արևելք՝ ձուլվելով Քուռ-Արաքսյան ընդարձակ հարթավայրի մեծ մասը կազմող Արցախյան դաշտավայրին. տարածքը 11.432 հազ. քառակուսի կիլոմետր է:

Հանրապետության տարածքն ունի խիստ կտրտված լեռնային մակերևույթ: Համեմատաբար հարթավայրային են Մարտունու և Մարտակերտի շրջանների արևելյան՝ ցածրադիր մասերը:

Լեռնային Ղարաբաղի տարածքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1100 մ:

Հյուսիսից հարավ՝ Լեռնային Ղարաբաղի արևմտյան ամբողջ սահմանով ձգվում է Ղարաբաղյան լեռնաշղթան, որից սկսվում են երկրամասի տարածքով արևմուտքից դեպի արևելք ձգվող մի շարք լեռնաճյուղեր: Հյուսիսային մասով ձգվում է Մռավի լեռնաշղթան, որտեղ գտնվում են Արցախի ամենաբարձր լեռնագագաթները՝ Գոմշասարը (3742 մ) և Մռավը (3343 մ): Սրանք մտնում են Մարտակերտի շրջանի հյուսիսարևմտյան հատվածի մեջ: Ղարաբաղյան լեռնաշղթայում է գտնվում «Քառասուն աղջիկ» լեռնագագաթը (2828 մ, Ասկերանի շրջան): Ավելի հարավ գտնվում են Մեծ Քիրսը (2725 մ, Շուշիի և Հադրութի շրջանների սահմանագլուխ) և Դիզափայտը (2480 մ, Հադրութի շրջան):

Տնտեսությունը. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունն ամբողջությամբ ոչնչացվել էր 1991-1994թթ. ղարաբաղյան պատերազմի հետևանքով: Հիմնահատակ ավերվեցին հանրապետության համարյա բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները: Այրվեցին հատկապես ցածրադիր վայրերի գյուղերի կոլտնտեսային բոլոր կառույցները, ձեռնարկությունները (անասնապահական, պահեստային, ոռոգման կառույցները, այգիները և այլն): Թալանվել, գողացվել են մեծ քանակությամբ գյուղատնտեսական արտադրանք, հարյուր հազարավոր գլուխ անասուններ: Ավերվել են մեծ թվով պետական, մասնավոր շենքեր, տներ, կրթական ու մշակութային օջախներ: Մոտավոր հաշվարկներով հասցված վնասը գնահատվում է 2.5-3.0 մլրդ ԱՄՆ դոլար:

Այսօրվա դրությամբ տեղական ձեռնարկատերերի և հայկական սփյուռքի ջանքերով հանրապետությունում գործում են նոր գործարաններ, կոմբինատներ, փոքր և խոշոր ձեռնարկություններ, որոնց շնորհիվ էլ ապահովվում է տնտեսական աճը:

Հանրապետությունում տնտեսական աճը հիմնականում ապահովվում է ապրանքների արտադրությամբ (արդյունաբերություն, անտառային տնտեսություն, գյուղատնտեսություն, շինարարություն), ծառայությունների արտադրությամբ (տրանսպորտ և կապ, առևտուր և հանրային սնունդ), ոչ շուկայական ծառայությունների և ֆինանսական միջնորդությունների հաշվին:

Արդյունաբերության մեջ հեռանկարային են և զարգացման ներուժ ունեն հանքարդյունաբերությունը, հումքի վերամշակման արտադրությունները, այդ թվում՝ թեթև արդյունաբերությունը (հագուստի, մանածագործական), սննդամթերքի, ոգելից խմիչքների, փայտամշակման (բնափայտի, կահույքի) արտադրությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ակտիվորեն զարգանում է նաև զբոսաշրջային ենթակառուցվածքը, կառուցվում են տուրիստական նոր կենտրոններ, հյուրանոցներ, ճանապարհներ և այլն:

Հանրապետության աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս զարգացնելու էլեկտրաէներգիայի, ինչպես միջին, այնպես էլ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը:

Հանրապետության էլեկտրաէներգետիկայի բնագավառում գործում են «Սարսանգ ՀԷԿ»՝ 50 ՄՎտ հզորությամբ, «Թրդի-1»՝ ՓՀԷԿ՝ 3 ՄՎՏ հզորությամբ, «Թրդի-2»՝ ՓՀԷԿ՝ 5,9 ՄՎՏ հզորությամբ, «Մատաղիս-1»՝ ՓՀԷԿ՝ 4,8 ՄՎտ հզորությամբ, «Մատաղիս-2»՝ ՓՀԷԿ՝ 3 ՄՎտ հզորությամբ, «Սյունիք-1»՝ ՓՀԷԿ՝ 3,3 ՄՎՏ հզորությամբ, «Սյունիք-2»՝ ՓՀԷԿ՝ 2,5 ՄՎՏ հզորությամբ, «Սյունիք-3»՝ ՓՀԷԿ՝ 1,7 ՄՎՏ հզորությամբ և «Սյունիք-4»՝ ՓՀԷԿ՝ 2,4 ՄՎՏ հզորությամբ էլեկտրակայանները: Նախագծման և կառուցման փուլում են գտնվում 23.65 դրվածքային հզորությամբ ևս 8 ՀԷԿ-եր:

Կառուցվում է Սոթք-Հաթերք բարձր լարման երկրորդ օդային գիծը, որով Արցախը կմիանա ՀՀ էլեկտրահամակարգին: Դրա միջոցով ապահովվելու են էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը, հուսալիությունը և էներգետիկ անվտանգությունը:

Հետպատերազմյան ժամանակահատվածում հանրապետությունում արագ տեմպերով զարգանում է հեռահաղորդակցությունը (էլեկտրոնային հաղորդակցությունը), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը:

Այսօր հանրապետությունում գործում են 2.5-3G համակարգերը, որոնց միջոցով ապահովվում են բջջային, էլեկտրոնային և ֆիքսված կապերը: Բնակչության ավելի քան 97 տոկոսն օգտվում է բջջային, իսկ 91 տոկոսը՝ ինտերնետ կապերից: Ծրագրված է կապի բոլոր տեսակները (էլեկտրոնային, բջջային, ֆիքսված, ինտերնետ) հասանելի դարձնել բոլորին:

Ինտերնետ կապը հանրապետության տարածք է ներմուծվում ՀՀ-ից օպտիկամանրաթելային մալուխով և ռադիո միջոցներով: Կառուցման փուլում է գտնվում օպտիկամանրաթելային մալուխի 2-րդ գիծը, որը Մարտակերտի և Շահումյանի տարածքներով կմիանա Հայաստանի Հանրապետությանը: Հետագայում կմիացվի նաև 3-րդ գիծը, որը Հադրութի և Քաշաթաղի հարավային շրջաններով նույնպես կմիանա Հայաստանի Հանրապետությանը:

Հանրապետությունում ներդրվել է հեռուստատեսության և ռադիոյի թվայնացման համակարգը, որը ավարտին կհասցվի 2015թ., և ապահովվածությունը կկազմի 93,5 տոկոս:

Արագ տեմպերով զարգանում են գյուղատնտեսությունը, փոքր և միջին բիզնեսը, հանքարդյունաբերությունը:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում 63 տոկոսը կազմում է բուսաբուծության, իսկ 37 տոկոսը՝ անասնաբուծության համախառն արտադրանքը: Դրանում առավել բարձր տեսակարար կշիռ ունեն Մարտունու, Ասկերանի և Քաշաթաղի շրջանները:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում գերակշռող բաժինը պատկանում է հացահատիկի և հատիկաղնդեղենի ու մսի արտադրությանը:

Պտղատու այգիների, խաղողի և թթի տնկարկների մակերեսը կազմում է 4950 հա:

Տարածքային կտրվածքով պտղատու այգիների, խաղողի և թթի տնկարկների մեծամասնությունը կենտրոնացված է Մարտունու շրջանում՝ 53 տոկոս:

Անասնաբուծության համար հեռանկարային զարգացման լայն հնարավորությունները պայմանավորված են բավական մեծ չափերի հասնող արոտավայրերի առկայությամբ:

Օգտակար հանածոները. Արցախում կան մետաղական և ոչ մետաղական մի շարք հանքատեսակներ, սակայն երկրաբանահետախուզական առումով նրա տարածքը դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ:

Հանածո վառելիքի տեսակներից հայտնաբերվել են քարածխի երևակումներ Մարտակերտի շրջանի Մաղավուզ, Նարեշտար և Քոլատակ գյուղերի մոտ: Ղարաբաղում դեռ հնուց հայտնաբերված են բազմամետաղների, հատկապես ցինկի, կապարի, պղնձի, ոսկու, ծծմբային կոլչեդանի, երկաթի հանքավայրեր ու երևակումներ: Դրանք հիմնականում գտնվում են Մեհմանա, Դրմբոն, Գյուլաթաղ, Կուսապատ, Վանք, Ղազանչի, Լիսագոր, Զարդանաշեն, Յոր և Մաղավուզ գյուղերի մոտ, Խաչեն ու Թարթառ գետերի միջև ընկած տարածքում, ինչպես նաև Մռավ լեռան լանջին:

Արցախը հարուստ է նաև ոչ մետաղներով: Մասնավորապես շատ են մարմարի ու բազմերանգ մարմարացած կրաքարի հանքավայրերը, որոնք հիմնականում գտնվում են Ստեփանակերտ և Շուշի քաղաքների, Քարազլուխ գյուղի մոտ:

Հանրապետության տարածքում կան գրանիտի, բազալտի, տուֆի, կրաքարի հանքավայրեր, ինչպես նաև ցեմենտի, գրաֆիտի, վիմաքարի, գիպսի, ավազի ու կավի բարձրորակ հումք:

Լեռնային Ղարաբաղի տարածքը հարուստ է նաև հանքային ջրի ռեսուրսներով: Որոշ աղբյուրներ այստեղ հայտնի են եղել դեռ շատ վաղուց: Հատկապես կիրառական նշանակություն ունեն Լիսագորի հանքային ջրի աղբյուրները, որոնք գտնվում են Շուշիից 16-18 կմ հեռավորության վրա՝ Շուշի-Գորիս ավտոճանապարհի մոտ: Դրանք պարունակում են մեծ քանակությամբ երկաթ և արժևորվում են իրենց բուժիչ հատկանիշներով: Իսկ Շուշիի շրջանի Շրվան գյուղի մոտ գտնվող աղբյուրի հիման վրա Շուշիում գործում էր առողջարան:

Շինարարությունը: Հանրապետությունում զարգանում է շինարարությունը, որի ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմում են ընդհանուր շինարարության 90-95 տոկոսը: Շինարարության ուղղություններն ըստ տնտեսության ճյուղերի 2013թ. հետևյալն էին՝ բնակարանային տնտեսություն 9,1 տոկոս (այդ թվում՝ զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակելի տների կառուցում և վերանորոգում), արդյունաբերություն 29,8 տոկոս, գյուղատնտեսություն 1 տոկոս, տրանսպորտ և կապ 7,6 տոկոս, կոմունալ տնտեսություն 10 տոկոս, կրթություն 8,5 տոկոս, մշակույթ և սպորտ 2,3 տոկոս, առողջապահություն 2 տոկոս, տնտեսության այլ ճյուղեր 29,3 տոկոս:

Շինարարությունն իրականացվում է ի հաշիվ ԼՂՀ պետական բյուջեի, արտաբյուջետային միջոցների, Արցախի ներդրումային հիմնադրամի, տարբեր կազմակերպությունների, բնակչության, մարդասիրական օգնության և այլ միջոցների հաշվին:

Հանրապետությունում գործում են 1 բանկ և ՀՀ բանկերի 32 մասնաճյուղեր:

Բնակչությունը ներգրավված է հանրապետության պետական ու մասնավոր հատվածներում, և զբաղվածները (վարձու աշխատողները) ընդգրկված են տնտեսության հետևյալ ճյուղերում՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, անտառտնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, կապ, առևտուր, բնակկոլտնտեսություն և կենցաղսպասարկում, առողջապահություն, սոցիալական ապահովություն և ապահովագրություն, ֆիզկուլտուրա և սպորտ, կրթություն, մշակույթ և արվեստ, գիտություն և գիտական սպասարկում, ֆինանսներ և վարկեր, կառավարում և պաշտպանություն, հասարակական կազմակերպություններ և այլն:

Տնտեսության ճյուղերում զբաղվածների միջին ցուցակային թվաքանակն է 50 000 մարդ:

Կրթությունը. Հանրապետությունում գործում են 219 ցերեկային հանրակրթական դպրոցներ, վարժարաններ և հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ հիմնարկներ:

Դպրոցների ընդհանուր թվի 87,2 տոկոսը կամ 191-ը գտնվում են գյուղական բնակավայրերում, իսկ 12,8 տոկոսը կամ 28-ը՝ քաղաքային բնակավայրերում:

Հանրակրթական դպրոցներում դասավանդում են 4942 ուսուցիչներ, ուսուցիչների 80,5 տոկոսը կամ 3978-ը՝ կանաք են: Ուսուցիչների 73,2 տոկոսը դասավանդում են գյուղական բնակավայրերում:

Դպրոցների քանակը ըստ շրջանների հերկյալն է.

Ստեփանակերտ քաղաքում՝ 14 դպրոց,

Ասկերանի շրջանում՝ 32 դպրոց,

Հաղրուֆի շրջանում՝ 25 դպրոց,

Մարտակերտի շրջանում՝ 36 դպրոց,

Մարտունու շրջանում՝ 36 դպրոց,

Շահումյանի շրջանում՝ 16 դպրոց,

Շուշիի շրջանում՝ 9 դպրոց,

Քաշաթաղի շրջանում՝ 51 դպրոց:

Դպրոցներում ընդգրկված աշակերտների ընդհանուր թվաքանակը 20 913 է:

Հանրապետությունում գործում են պետական 4 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որտեղ պետպատվերով և վճարովի ուսուցմամբ սովորում են 2068 ուսանող:

ԼՂՀ-ում գործում են 5 բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ բուհ)՝ 2 պետական և 3 ոչ պետական, որտեղ սովորում են 4677 ուսանող, որից 74,7 տոկոսը՝ պետական բուհում:

Մագիստրատուրայում սովորում է 870 մարդ. առավելագույն տեսակարար կշիռ ունեն տնտեսագիտության, իրավագիտության և բանասիրական մասնագիտություններով սովորողները:

Ասպիրանտուրայում սովորում է 67 մարդ. առավելագույն տեսակարար կշիռ ունեն տնտեսագիտություն, պատմական և բանասիրական մասնագիտություններով սովորողները:

Մշակույթ, զբոսաշրջություն և սպորտ. Հանրապետությունը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, գործում են թատրոններ, կինոթատրոններ, մշակույթի կենտրոններ և մշակույթի տներ: Լեռնային Ղա-

րաբաղի Հանրապետությունում գործում է 16 մշակութային կազմակերպություն, որոնցից 8-ը՝ Ստեփանակերտ քաղաքում:

Հանրապետությունում գործում են 14 թանգարաններ, որոնցից 3-ը գտնվում են Ստեփանակերտ քաղաքում:

Թանգարանների հիմնական ֆոնդերում հաշվառված է 60 459 ցուցանմուշ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում են 1 հանրապետական և 9 հանրային գրադարաններ, այդ թվում՝ 1-ը մանկական, որոնց գրքային ֆոնդը կազմում է 388 544 օրինակ:

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչության տեղեկատվության՝ հանրապետության տարածքում հաշվառված են մոտ 10 000 հուշարձաններ:

Պետական պահպանության տակ առնված ճարտարապետական հուշարձանների (ներառյալ եկեղեցիներ, վանքեր) թիվը կազմում է 1600, որոնցից ուսումնասիրված են 753-ը:

Հանրապետությունում հրատարակվում են 20 անուն հասարակական-քաղաքական, հեղինակային, գրական-գեղարվեստական, մանկական և գովազդային բնույթի թերթեր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում են 13 սպորտային կազմակերպություններ, որոնցից 9 մարզական դպրոցներ:

Սպորտային կազմակերպություններում գործում են օլիմպիական և ոչ օլիմպիական մարզաձևերի 263 խմբեր, որոնցում ընդգրկված են 3643 մարզիկներ: Մարզիչների թիվը կազմում է 205 մարդ:

Կլիման. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կլիմայական պայմանները մեղմ են և չափավոր: Տարածքի զգալի մասը մերձարևադարձային չոր կլիմայական գոտում է:

Տարեկան օդի միջին ջերմաստիճանն այստեղ կազմում է +14.0°C: Ամենատաք ամիսները հուլիսն ու օգոստոսն են: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ամենատաք վայրերն են Մարտակերտի ու Մարտունու հարթավայրային շրջանները:

Հանրապետության տարածքում գերակշռում են լեռնահովտային քամիները: Գարնան և ամռան ամիսներին հաճախակի են ուժեղ ամպրոպները: Մթնոլորտային տեղումների քանակն ըստ գոտիների տարեկան միջին հաշվով տատանվում է 480-700 մմ սահմաններում: Տեղումների մեծ մասը նկատվում է մայիս-հունիս ամիսներին: Այս ժամանակահատվածում հաճախակի են նաև տեղատարափ անձրևներն ու կարկուտը:

Տարվա ընթացքում մառախլապատ օրերի թիվը միջինում կազմում է 100-125:

Ձրային ռեսուրսները. Հանրապետության տարածքում մթնոլորտային տեղումները միջին հաշվով տարեկան կազմում են 580մմ, որի հետևանքով ԼՂՀ տարածքում (առանց Քաշաթաղի ու Շահումյանի շրջանների) տարեկան գոյանում է ավելի քան 2530 մլն խոր. մ ջուր, որից 1390 մլն խոր. մ-ը (55 տոկոս) գոլորշիանում է, իսկ 1140 մլն խոր. մ առաջացնում է մակերեսային և ստորգետնյա հոսքեր:

Մակերևույթի թեքության պատճառով Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր գետերն արևմտյան և հարավարևմտյան լեռներից հոսում են դեպի արևելք ու հարավ-արևելք:

Լեռնային այդ արագահոս գետերից են Իշխանազետը, Վարանդան, Խոնաշենը, Կարկառը, Ինջան, Խաչենը, Կավարտը, Թարթառը և Տրտուն:

Թարթառ գետի վրա կառուցվել է Սարսանգի արհեստական ջրամբարը, որն ունի 12 կմ երկարություն, 0,6 կմ լայնություն և 575 մ³ տարողություն:

Արցախի տարածքը հարուստ է սառնորակ աղբյուրներով: Դրանց թիվը հատկապես մեծ է լեռնային, անտառային վայրերում (ուսումնասիրվել է ընդամենը 1042 աղբյուր, բացի Քաշաթաղի և Շահումյանի շրջաններից):

Հարթավայրային մասերում կառուցված են ջրահավաք սրահներ (քյահրիզներ) և անհատական ջրհորներ:

Բնակչությանը ոռոգման և խմելու ջրով ապահովելու համար օգտագործվում են նաև ստորգետնյա ջրերը (արտեզյան ջրհորների միջոցով):

Քուսակա և կենդանական աշխարհը. Լեռնային Ղարաբաղի բուսական աշխարհը բազմազան է. աճում են շուրջ երկու հազար բուսատեսակներ: Այստեղ լերկ ժայռերը շատ քիչ են. այդպիսիք են միայն բարձր լեռնագագաթային մասերը: Արցախի լեռները ծածկված են անտառներով, թփուտներով կամ խոտային բուսականությամբ:

Ծովի մակերևույթից մինչև 300-350մ բարձրություն ունեցող տափաստանային մասերում գերակշռում են հիմնականում կիսաանապատային տիպի բուսատեսակները: Տարածված են հատկապես օշինդրը, ուղտափուշը, կապարը, ողնախոտը, երնջակը և բազմաթիվ այլ բուսատեսակներ: Խոտային բուսականությունը հարուստ է նախալեռնային և միջլեռնային գոտիներում:

Արցախը հարուստ է նաև անտառներով, որոնք կազմում են հանրապետության տարածքի ավելի քան 36 տոկոսը կամ 160 հազ. հա: Առավել անտառաշատ են Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանները, որտեղ աճում են կաղնի, բոխի, լորենի, հացենի, կեչի և այլ ծառատեսակներ:

Անտառների բացատներում առատորեն աճում են բազմատեսակ ծաղկաբույսեր՝ մանուշակ, անտառավարդ, կակաչ, շուշան, մեխակ, նունուֆար: Հանրապետությունն աչքի է ընկնում նաև մոշի առատությամբ: Անտառային գոտուց վեր՝ մոտ 2300 մ բարձրությունների վրա, սփռված են ալպիական, իսկ ավելի բարձր լեռնագագաթային մասերում՝ տունդրային յուրահատուկ բուսատեսակներ:

Բավականին բազմազան է նաև երկրամասի կենդանական աշխարհը: Դաշտային գոտում կարելի է հանդիպել ջեյրանների, վայրի այծերի ու խոզերի: Անտառներում կան գորշ արջեր, գայլեր, վայրի կատուներ, լուսաններ, աղվեսներ, նապաստակներ, սկյուռներ, խլոփոճներ ու վայրի խոզեր: Թռչուններից տարածված են վայրի սագը, բադը, կաքավը, կաչաղակը, ագռավը, ճնճղուկը, վայրի աղավնին, ուրուրը, կկուն, տատրակը, փայտփորիկը, մոշահավը, արտույտը, բուն և այլն: Դաշտավայրային մասերում ու քարքարոտ նախալեռնային գոտիներում տարածված են օձերի շատ տեսակներ, կրիաներ, ոզնիներ: Բազմազան են մորեխների, բզեզների ու թիթեռների տեսակները: Համեմատաբար մեծ գետերում կան ձկներ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքը. Ստեփանակերտ

ԼՂՀ Ստեփանակերտ համայնքը տեղաբաշխված է հանրապետության կենտրոնական հատվածում և հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքը:

Քաղաքի կարգավիճակ է ստացել 1823թ-ից, իսկ մինչ այդ հին հայկական բնակավայր էր՝ Վարարակն անվամբ, որն ունի ավելի քան 2000-ամյա պատմություն:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1923թ., 26 կոմիսարների առաջնորդ, Բաքվի կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանի հիշատակը հավերժացնելու համար, բնակավայրը վերանվանվեց Ստեփանակերտ:

Մինչև 1978թ. Ստեփանակերտը մարզային վարչական կենտրոն լինելուց բացի նաև համանուն շրջանի կենտրոնն էր:

Համայնքը լեռնային է, ունի 1667,21 հա տարածք, որից 619,71 հա գյուղատնտեսական նշանակության, 596,64 հա անտառային հողեր:

Ստեփանակերտ մայրաքաղաքի սահմանային գոտու հարավարևելյան մասով հոսում է Կարկառ գետը, իսկ հյուսիսային մասով՝ Կարկառ գետի Խալֆայի վտակը:

Ստեփանակերտ համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 53403 մարդ, կա 13694 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում աշխատում է մայրաքաղաքի և հանրապետության տարբեր պետական հիմնարկներում, պետական ու մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում:

Համայնքում գործում են քաղաքապետարան, Ստեփանակերտի «Քաղաքային մշակույթի տուն» և «Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոն» (հիմնադրվել է 1932թ.) պետական ոչ առևտրային կազմակերպությունները:

Ստեփանակերտ քաղաքում առողջապահական հաստատություններն են՝ «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ, «Արևիկ» ՓԲԸ (մանկական հիվանդանոց), «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ, «Արմինե Փակումյանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ, «Ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ, «Հակապալարախտային դիսպանսեր» ՓԲԸ, «Ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ, «Մաշկա-վեներոլոգիական դիսպանսեր» ՓԲԸ, «Հոգեթմրաբանական դիսպանսեր» ՓԲԸ, «Ստոմատոլոգիա» ՓԲԸ,

«Կանխարգելիչ ախտահանման բաժանմունք» ՓԲԸ, «Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ, «Ք.Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ, «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» ՓԲԸ, «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ և կանանց կլինիկա, քաղաքի տարածքում գործում են մի շարք ստոմատոլոգիական կենտրոններ և կլինիկաներ:

Ստեփանակերտ քաղաքում գործում են 12 հանրակրթական դպրոցներ (N 3 ռուսական թեքումով և N 8, 11 ավագ դպրոցներ), որտեղ սովորում են 6747 աշակերտներ, և Ստեփանակերտի «Կոմիտասի անվան երաժշտական դպրոց», Ստեփանակերտի «Հ.Գյուրջյանի անվան արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ները, համայնքն ունի 5 մանկապարտեզ՝ 3 պետական, 1 (ՀԱԸ) Հայ Ավետարանչական ընկերության և 1-ը «Սոսե» (ՀՕՄ) հայ օգնության միության: Ընդհանուր առմամբ մանկապարտեզ հաճախում են 1313 երեխաներ:

Բարձրագույն ուսումնական հաստատություններից Ստեփանակերտ քաղաքում գործում են 2 պետական բուհ՝ Արցախի պետական համալսարանը և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղը:

Ոչ պետական հավատարմագրված 3 բուհերն են՝ «Գրիգոր Նարեկացի», «Մեսրոպ Մաշտոց» համալսարանները և «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտը:

Գործում են 4 քոլեջներ՝ «Թ. Քամայանի անվան պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը, Ստեփանակերտի պարարվեստի քոլեջը, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջը և Ստեփանակերտի արհեստագործական քոլեջը:

Մայրաքաղաքում գործում է նաև Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը:

Քաղաքի պատմամշակութային հուշարձաններն են՝ դամբարանաբլուրներ (մ.թ.ա. III հազ. II կես), «Կրկժան» կոչվող հատվածում (Ստեփանակերտից արևմուտք) գտնվում է Աբ. Աստվածածին եկեղեցին (XVIդ.), գերեզմանոց (XVI-XIXդդ.), աղբյուր (XIXդ.), խաչքար (XII-XIIIդդ.), Փահլուր (Ստեփանակերտից 1կմ հեռավորության վրա), գերեզմանոց (XII- XIXդդ.), խաչքար (XII-XIIIդդ.), «Կարմիր քերծ» հնավայր (XII-XIVդդ.):

Ստեփանակերտի տարածքում առկա են պղնձի (կատարվում են հետազոտություններ), կրաքարի, մարմարացած կրաքարի (շահագործվում է) և կոպճի հանքային պաշարներ:

Ջրամատակարարումն իրականացվում է պետության կողմից կենտրոնացված՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով, համակարգը սնվում է 4 ակունքներից: Համայնքի տարածքում առկա են թվով 11 աղբյուրներ՝ «Վարարակն», «Երեք ծորակ», «Կրկժան», «Հոռեն տակ», «Մռակած», «Փահլուր», «Ղազախ բուլախ», «Հաջի բուլախ», «Մոսուն», «Քոռ» և «Թթու ջուր»: Համայնքի տարածքում գործում են արտեզյան 7 ջրհորներ:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով և գազաֆիկացված է:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Գործում է 3G բջջային կապի համակարգը, անլար և ստացիոնար կապերն առկա են, մատուցվում են ինտերնետ կապի օպտիկամանրաթելային մալուխով, DSL և Wi-Fi սարքավորումներով ծառայությունները:

Համայնքում գործում են առևտրի 1200 օբյեկտներ, 15 բանկեր և բանկերի մասնաճյուղեր:

Գործում են 11 հյուրանոցներ՝ «Պարկ Հոթել Արցախ», «Արմենիա», «Նաիրի», «Եվրոպա», «Հեղնար», «Վալեքս Գարդեն Հոթել», «Լոտոս», «Երևան», «Էդ-Էմ», «ՖԴ Սոֆիա» և «Ստենդալ Հոթել»:

Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհներն ասֆալտապատ են:


Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են N 10, 12, 13, 14, 15, 16, 17 և 18 կանոնավոր ներքաղաքային երթուղիներով, իսկ թիվ 21 ժամանակավոր երթուղով ուղևորափոխադրումներն իրականացվում են միայն շաբաթ և կիրակի օրերին:

Իրականացվում են նաև միջպետական ուղևորափոխադրումներ՝ Ստեփանակերտ-Երևան-Ստեփանակերտ՝ թիվ 001 կանոնավոր երթուղով:

Ստեփանակերտի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը և պետական բյուջեից նպատակային հատկացումները:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ**

ԱՄԿԵՐԱՆԻ ՀԵՐՑԵՆ
ԿՈՄՄՈՆԻՏԵԿՏԵՋ



ԼԴԸ Ասկերանի շրջանի սոցալ-տնտեսական բնութագիրը

Ասկերանի շրջանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավոր է և զբաղեցնում է հանրապետության ընդհանուր տարածքի 1/9 մասը: Շրջկենտրոնն է Ասկերան քաղաքը: Այն մինչև 1978թ. կոչվում էր Ստեփանակերտի շրջան:

Ասկերանի շրջանը կազմված է 42 համայնքների (47 բնակավայր, 45-ը բնակեցված) տարածքներից և պետական սեփականություն հանդիսացող հողային և ջրային այլ տարածքներից (119 140.0 հա, որից 40 674.75 հա գյուղատնտեսական նշանակության): Շրջանի անտառածածկ տարածքը կազմում է 66 417.83 հա:

Ասկերանի շրջանը հյուսիսից սահմանակից է Մարտակերտի շրջանին մոտ 40 կմ երկարությամբ, հյուսիս-արևմուտքից՝ Քաշաթաղի շրջանին մոտ 10 կմ երկարությամբ, հարավ-արևմուտքից՝ Շուշիի շրջանին մոտ 22 կմ երկարությամբ, հարավից՝ Հաղբուֆի շրջանին մոտ 5 կմ երկարությամբ, հարավ-արևելքից՝ Մարտունու շրջանին մոտ 40 կմ երկարությամբ, արևելքից՝ Աղրբեջանի Հանրապետությանը մոտ 16 կմ երկարությամբ:

Ասկերանի շրջանի բնակչության թվաքանակը կազմում է 18181 մարդ, կա 4858 տնտեսություն:

Շրջանի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ հողագործությամբ և անասնապահությամբ, ինչպես նաև աշխատում է շրջանի պետական հիմնարկներում և մայրաքաղաքի պետական ու մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում:

Ասկերանի շրջանում գործում են 1 քաղաքապետարան և 41 համայնքապետարաններ (գյուղապետարաններ), 36 մշակույթի տներ, 1 հիվանդանոց և 41 բուժկետեր, 8 հիմնական, 25 միջնակարգ, 4 երաժշտական և 1 արվեստի դպրոցներ, 7 մանկապարտեզներ:

Ասկերանի շրջանի տարածքում պահպանվել են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ՝ եկեղեցիներ (52), սրբատեղիներ (9), խաչքարեր (23), աղբյուրներ (27), դամբարաններ (10), գյուղատեղեր (15) և գերեզմանոցներ (34):

Դրանցից առաձնահատուկ ուշադրության են արժանի հատկապես Ավետարանոց գյուղի Վարանդայի մելիքության՝ Բերդավանի բազմաթիվ հուշարձանները, ինչպես նաև Ասկերանի պաշտպանական պարիսպը:

Ասկերանի շրջանի համայնքներն ապահովված են էլեկտրաէներգիայով և մեծ մասամբ գազաֆիկացված են:

Ասկերան քաղաքի և շրջանի թվով 18 համայնքների ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվում է պետության կողմից կենտրոնացված, իսկ մնացած համայնքներում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Ասկերանի շրջանում հեռուատատեսությունը հասանելի է: Անալոգային հեռուատատեսության սփռվածությունը կազմում է 99.3 տոկոս, թվային հեռուատատեսությանը՝ 97.4 տոկոս: Ռադիոյի հեռարձակումը շրջանում կազմում է 95.6 տոկոս:

Շրջանի բոլոր համայնքներն ապահովված են բջջային հեռախոսակապով:

Ասկերանի շրջանի տարածքում ինտերնետ ծառայությունը հասանելի է:

Ասկերանի շրջանում գործում են առևտրի և ծառայությունների մատուցման տարբեր օբյեկտներ:

Ասկերանի շրջանային ենթակայության ճանապարհները ասֆալտապատ են, բնահողային, խճից և կոպճից, չմշակված կապակցող նյութերից:

Ասկերանի շրջանի 47 բնակավայրերից կանոնավոր ուղևորափոխադրումներով ապահովված են 39 բնակավայր, և սպասարկվում է բնակչության ավելի քան 84.8 տոկոսը:

Ասկերանի շրջանի համայնքների բյուջեների ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը և պետական բյուջեից նպատակային հատկացումները:

Ասկերանի շրջանի վարչապարառձքային միավորները.

Համայնքի անվանումը	Բնակավայրի անունը
<i>Ասկերան</i>	<i>Ասկերան քաղաք</i>
	<i>Քյաթուկ գյուղ</i>
<i>Ակնաղբյուր</i>	<i>Ակնաղբյուր գյուղ</i>
<i>Այգեստան</i>	<i>Այգեստան գյուղ</i>
<i>Աստղաշեն</i>	<i>Աստղաշեն գյուղ</i>
<i>Ավերպարանոց</i>	<i>Ավերպարանոց գյուղ</i>
<i>Արմենակավան</i>	<i>Արմենակավան գյուղ</i>
<i>Պատարա</i>	<i>Պատարա գյուղ</i>
<i>Բերքածոր</i>	<i>Բերքածոր գյուղ</i>
<i>Դահրավ</i>	<i>Դահրավ գյուղ</i>
<i>Դաշուշեն</i>	<i>Դաշուշեն գյուղ</i>
<i>Իվանյան</i>	<i>Իվանյան գյուղ</i>

Լուսածոր
Խնապար
Խանցք
Խաչեն
Խաչմաչ
Խնածախ
Խնձրիստան
Խրամորթ
Ծաղկաշապ
Կարմիրգյուղ
Հարավ
Հիլիս
Հովսեփավան
Մադաթաշեն
Մխիթարաշեն
Մոշխումհապ
Նախիջևանիկ
Նորագյուղ
Ներքին Սզնեք
Շոշ
Ջրաղացներ
Ռև
Սառնաղբյուր
Սարդարաշեն
Սարուշեն
Սղնախ
Վարդածոր
Վերին Սզնեք
Ուղտասար
Փառուխ
Քոասնի

Լուսածոր գյուղ
Խնապար գյուղ
Խանցք գյուղ
Խաչեն գյուղ
Ուրախաչ գյուղ**
Խաչմաչ գյուղ
Խնածախ գյուղ
Խնձրիստան գյուղ
Խրամորթ գյուղ
Ծաղկաշապ գյուղ
Կարմիրգյուղ գյուղ
Հարավ գյուղ
Հիլիս գյուղ
Հովսեփավան գյուղ
Մադաթաշեն գյուղ
Մխիթարաշեն գյուղ
Մոշխումհապ գյուղ
Նախիջևանիկ գյուղ
Նորագյուղ գյուղ
Ներքին Սզնեք գյուղ
Շոշ գյուղ
Ջրաղացներ գյուղ
Ռև գյուղ
Սառնաղբյուր գյուղ
Դահրազ գյուղ
Սարդարաշեն գյուղ
Սարուշեն գյուղ
Սղնախ գյուղ
Վարդածոր գյուղ
Վարազաբուն գյուղ
Վերին Սզնեք գյուղ
Ուղտասար գյուղ
Փառուխ գյուղ
Քարագուլիս գյուղ**
Քոասնի գյուղ

ԼԴՀ Ասկերանի շրջանի Ասկերան քաղաքային համայնքը

ԼԴՀ Ասկերանի շրջանի Ասկերան քաղաքային համայնքը տեղաբաշխված է հանրապետության հյուսիսարևելյան հատվածում և հանդիսանում է Ասկերանի շրջկենտրոնը: Մայրաքաղաք Ստեփանակերտից գտնվում է 15 կմ հեռավորության վրա:

Համայնքը լեռնային է, ունի 2793,5 հա տարածք, որից 1774,57 հա գյուղատնտեսական նշանակության, 658,7 հա անտառային հողեր:

Ասկերան համայնքի սահմանային գոտով հոսում է Կարկառ գետը:

Ասկերան համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 2256 մարդ, կա 657 տնտեսություն:

Ասկերան համայնքի կազում ընդգրկված է նաև Քյաթուկ գյուղը: Քյաթուկ գյուղի բնակչության թվաքանակը կազմում է 6 մարդ, կա 6 տնտեսություն:

Ասկերանի բնակչությունը հիմնականում աշխատում է տարբեր պետական հիմնարկներում, մայրաքաղաքի և շրջկենտրոնի պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, ինչպես նաև զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ հողագործությամբ և անասնապահությամբ:

Համայնքում գործում են քաղաքապետարան, «Ասկերանի մշակույթի և երիտասարդության կենտրոն» ՊՈԱԿ, շրջանային հիվանդանոց, միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 246 աշակերտներ, և «Ասկերանի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ, համայնքն ունի 1 մանկապարտեզ՝ ՀԱԸ (Հայ Ավետարանչական ընկերություն), որտեղ հաճախում են 54 երեխաներ:

Քաղաքի պատմամշակութային հուշարձաններն են՝ Ասկերանի բերդ (XVIII դ.), քարանձավ-սրբատեղի «Հացուտ», նորակառույց Սբ. Աստվածածին եկեղեցի (2002թ.):

Քաղաքում կան մերգելի (շահագործվում է) հանքային պաշարներ:

Ջրամատակարարումն իրականացվում է պետության կողմից կենտրոնացված՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով, համակարգն ունի արտաքին և ներքին ցանցեր ու սնվում է 1 ակունքից: Համայնքի տարածքում առկա են թվով 3 աղբյուրներ՝ «Կուլուն», «Բայթալ» և «Քյաիրիզ»: Ասկերան քաղաքի Ակնա թաղամասում կա 1 գործող ջրահավաք սրահ: Խմելու ջրի համար առկա է 1 գործող արտեզյան ջրհոր:

Համայնքի տարածքով անցնում են «Սովետարխ», «Խաթունարխ» և «Իվանյան-Ասկերան» ոռոգման ջրատարները:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով, առկա է գազամատակարարման համակարգ:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Գործում է 3G բջջային կապի համակարգը, անլար և անշարժ հեռախոսակապերն առկա են, մատուցվում են ինտերնետ կապի օպտիկամանրաթելային մալուխով և DSL սարքավորումներով ծառայությունները:

Համայնքում գործում են առևտրի 26 օբյեկտներ, 3 գործարաններ և 3 բանկերի մասնաճյուղեր:

Համայնքային ենթակայության ճանապարհներն ասֆալտապատ են:

Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են Ասկերան-Ստեփանակերտ-Ասկերան միջըրջանային թիվ 101 կանոնավոր ավտոբուսային երթուղով:

Ասկերանի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը և պետական բյուջեից նպատակային հատկացումները:

ԼՂՀ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր համայնքը

ԼՂՀ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր (Կարաբուլախ) համայնքը տեղաբաշխված է հանրապետության հարավարևելյան հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 30 կմ հեռավորության վրա:

Համայնքը լեռնային է, ունի 1138,37 հա տարածք, որից 857,6 հա գյուղատնտեսական նշանակության, 203,48 հա անտառային հողեր:

Ակնաղբյուր համայնքի սահմանային գոտով հոսում է Վարանդա գետի վտակը:

Ակնաղբյուր համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 612 մարդ, կա 177 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 81 աշակերտներ, ունի 1 պետական մանկապարտեզ, որտեղ հաճախում են 30 երեխաներ:

Կան պատմամշակութային հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցի (XIXդ.), գերեզմանոց (XVII-XIXդդ.), ջրաղաց (XIXդ.), կամուրջ (XXդ.), հաշվառված է 10 հուշարձան:

Ջրամատակարարումն իրականացվում է պետության կողմից կենտրոնացված՝ ինքնահոս եղանակով, համակարգը սնվում է 2 ակունքներից: Համայնքի տարածքում առկա են թվով 6 աղբյուրներ՝ «Ակնաղբյուր», «Գյունե», «Ղուզե», «Քառ», «Ճիրմիճրի» և «Փայտ»:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով, առկա է գազամատակարարման համակարգ:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Բջջային և անլար հեռախոսակապերն առկա են: Ինտերնետ ծառայությունը հասանելի է (ապահովված է Wi-Fi ինտերնետ կապով):

Համայնքում գործում են առևտրի 3 օբյեկտներ:

Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհները պատված են խճով և կոպճով, չմշակված կապակցող նյութերով:

Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են Ակնաղբյուր-Ստեփանակերտ-Ակնաղբյուր միջշրջանային թիվ 105 կանոնավոր ավտոբուսային երթուղով:

Ակնաղբյուրի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը և պետական բյուջեից նպատակային հատկացումները:

ԼՂՀ Ասկերանի շրջանի Այգեստան համայնքը

ԼՂՀ Ասկերանի շրջանի Այգեստան (Բալլուջա) համայնքը տեղաբաշխված է հանրապետության կենտրոնական հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 17 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 10 կմ հեռավորության վրա:

Համայնքը լեռնային է, ունի 2283,46 հա տարածք, որից 974,91 հա գյուղատնտեսական նշանակության, 446,54 հա անտառային հողեր:

Այգեստան համայնքի սահմանային գոտով հոսում է Կարկառ գետի Մեղրագետ վտակը:

Այգեստան համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 1084 մարդ, կա 328 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անանապահությամբ և հողագործությամբ, կան նաև պետական տարբեր համակարգերի աշխատողներ:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 157 աշակերտներ, ունի 1 պետական մանկապարտեզ, որտեղ հաճախում են 50 երեխաներ:

Կան պատմամշակութային հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցի (1850թ.), գերեզմանոց (XVII-XIXդդ.), խաչքար (XIIIդ.), «Փռչնի նահատակ» սրբատեղի (XII-XIIIդդ.), «Թամցի» եկեղեցի (XII-XIIIդդ.), գյուղատեղի (XII-XIIIդդ.), դամբարաններ (մ.թ.ա. II-I դդ.), հաշվառված է 10 հուշարձան:

Համայնքում առկա են գաջի հանքային պաշարներ:

Ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից՝ ինքնահոս եղանակով, ջրամատակարարման համակարգը սնվում է 3 ակունքներից: Համայնքի տարածքում առկա են թվով 10 աղբյուրներ՝ «Թխծրաբեն», «Մոշ», «Շքյուրեն բաղեն», «Ղգարանց բաղեն», «Դերունց բաղեն», «Փթարխյու», «Տրցակետ», «Բաբեն», «Պտրուսանց» և «Շոշան»:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով, առկա է նաև գազամատակարարման համակարգ:

Հեռուստատեսությունը և ուղիղն համայնքում հասանելի են:

Գործում է 2.5G բջջային կապի համակարգը, անլար հեռախոսակապն առկա է:

Ինտերնետ ծառայությունը հասանելի է (ապահովված է Wi-Fi ինտերնետ կապով):

Համայնքում գործում են առևտրի 8 օբյեկտներ:

Համայնքային ենթակայության ճանապարհներն ասֆալտապատ են, խճիղ և կոպճիղ, չմշակված կապակցող նյութերից:

Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են Այգեստան-Ստեփանակերտ-Այգեստան միջրջանային թիվ 121 կանոնավոր ավտոբուսային երթուղով:

Այգեստանի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը:

ԼՂՀ Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքը

ԼՂՀ Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքը տեղաբաշխված է հանրապետության կենտրոնական հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 16 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 20 կմ հեռավորության վրա:

Համայնքը լեռնային է, ունի 1595,7 հա տարածք, որից 1263,08 հա գյուղատնտեսական նշանակության, 177,69 հա անտառային հողեր:

Աստղաշեն համայնքի սահմանային գոտով հոսում է Բադարա գետը:

Աստղաշեն համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 507 մարդ, կա 143 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 68 աշակերտներ, գործում է նաև Ասկերանի շրջանի «Աստղաշենի արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ը:

Կան պատմամշակութային հուշարձաններ՝ Սբ. Գևորգ եկեղեցի (XIX դ. կեսեր), դամբարաններ (մ.թ.ա. II-I հազ.), աղբյուր (1930թ.), հաշվառված է 53 հուշարձան:

Ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից՝ ինքնահոս եղանակով, համակարգը սնվում է 2 ակունքներից: Համայնքի տարածքում առկա են թվով 11 աղբյուրներ՝ «Քարե», «Ալեքսանի», «Պլպլան», «Վերին», «Նապաստակի», «Վանուն», «Ալիսանի», «Քրամի», «Վետանց», «Ղշաղեն» և «Մոսունց ծորին»:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով, առկա է նաև գազամատակարարման համակարգ:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Գործում է 2.5G բջջային կապի համակարգը, անլար հեռախոսակապն առկա է:

Ինտերնետ ծառայությունը հասանելի է (ապահովված է Wi-Fi ինտերնետ կապով):

Համայնքում գործում են առևտրի 2 օբյեկտներ:

Համայնքային ենթակայության ճանապարհները պատված են խճով և կոպճով, չմշակված կապակցող նյութերով:

Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են Պատարա-Ստեփանակերտ-Պատարա թիվ 112 և

Խանցք-Ստեփանակերտ-Խանցք միջրջանային թիվ 123 կանոնավոր ավտոբուսային երթուղիներով:

Աստղաշենի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը և պետական բյուջեից նպատակային հատկացումները:

ԼՂՀ Ասկերանի շրջանի Ավետարանոց համայնքը

ԼՂՀ Ասկերանի շրջանի Ավետարանոց համայնքը տեղաբաշխված է հանրապետության կենտրոնական հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 40 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 23 կմ հեռավորության վրա:

Համայնքը լեռնային է, ունի 2433,58 հա տարածք, որից 1407,71 հա գյուղատնտեսական նշանակության, 894,91 հա անտառային հողեր:

Ավետարանոց համայնքի սահմանային գոտով հոսում է Վարանդա գետի վտակը:

Ավետարանոց համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 1121 մարդ, կա 254 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, «Ասկերանի մանկական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի Ավետարանոցի մասնաճյուղը, գործում է բուժկետ, միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 165 աշակերտներ, ունի 1 պետական մանկապարտեզ՝ հաճախում են 30 երեխաներ: Գործում են 4 խանութներ:

Կան պատմամշակութային հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցի (1651թ.), Կուսանանց անապատ վանք (1616թ.), գերեզմանոց (XIXդ.), խաչքար (XII-XIIIդդ.), ամրոց «Չանախչի» (XCVII-XVIIIդդ.), դամբարաններ (մ.թ.ա. II-I հազ.), ապարանք (XVIIIդ.), ջրաղաց (XIXդ.), հաշվառված է 53 հուշարձան:

Ջրամատակարարումն իրականացվում է պետության կողմից կենտրոնացված՝ ինքնահոս եղանակով, համակարգը սնվում է 1 ակունքից: Համայնքի տարածքում առկա են թվով 21 աղբյուրներ՝ «Ցորտ», «Մեծ», «Դաշխուն», «Շոր», «Շահգալղանց», «Քշանանց», «Կերթնուկ», «Սալքարեր», «Ռուսեն», «Աշոտեն», «Թաս», «Հացեն», «Վերթեգ», «Քոռ», «Հայրունց», «Ստեփանանց», «Իդանանց», «Ձիմով», «Սահար», «Վանեսի» և «Խնծորամաքի» (թթու ջուր):

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով, առկա է նաև գազամատակարարման համակարգ:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Գործում է 2G բջջային կապի համակարգն, անլար հեռախոսակապն առկա է:

Ինտերնետ ծառայությունը հասանելի է (ապահովված է Wi-Fi ինտերնետ կապով):

Համայնքում գործում են առևտրի 26 օբյեկտներ:

Համայնքային ենթակայության ճանապարհները պատված են խճով և կոպճով, չմշակված կապակցող նյութերով:

Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են Ավետարանոց-Ստեփանակերտ-Ավետարանոց թիվ 106 և Ջրաղացներ-Ստեփանակերտ-Ջրաղացներ թիվ 122 միջըրջանային կանոնավոր ավտոբուսային երթուղիներով:

Ավետարանոցի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը և պետական բյուջեից նպատակային հատկացումները:

ԼՂՀ Ասկերանի շրջանի Արմենակավան համայնքը

ԼՂՀ Ասկերանի շրջանի Արմենակավան համայնքը տեղաբաշխված է հանրապետության հյուսիսարևելյան հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 15 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 31 կմ հեռավորության վրա:

Համայնքը հարթավայրային է, ունի 526,52 հա տարածք, որից 428,65 հա գյուղատնտեսական նշանակության, 28,12 հա անտառային հողեր:

Արմենակավան համայնքի սահմանային գոտով հոսում է Խաչեն գետը:

Արմենակավան համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 83 մարդ, կա 17 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքում գործում են գյուղապետարան, գործում է բուժկետ, Խրամորթի միջնակարգ դպրոցի Արմենակավանի մասնաճյուղը, որտեղ սովորում են 8 աշակերտներ:

Ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից՝ մեխանիկական եղանակով, համակարգը սնվում է 1 աղբյուրից:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Բջջային և անլար հեռախոսակապերն առկա են:

Ինտերնետ ծառայությունը հասանելի է:

Համայնքային ենթակայության ճանապարհները բնահողային են:

Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են Արմենակավան-Խրամորթ-Ստեփանակերտ-Խրամորթ-Արմենակավան միջշրջանային թիվ 125 կանոնավոր ավտոբուսային երթուղով:

Արմենակավանի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը և պետական բյուջեից նպատակային հատկացումները:

ԼՂՀ Ասկերանի շրջանի Բերքաձոր համայնքը

ԼՂՀ Ասկերանի շրջանի Բերքաձոր համայնքը տեղաբաշխված է հանրապետության կենտրոնական հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 12 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 6 կմ հեռավորության վրա:

Համայնքը լեռնային է, ունի 1127,67 հա տարածք, որից 354,14 հա գյուղատնտեսական նշանակության, 281,0 հա անտառային հողեր:

Բերքաձոր համայնքի սահմանային գոտով հոսում է Կարկառ գետը:

Բերքաձոր համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 195 մարդ, կա 50 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ, կան պետական տարբեր համակարգերի աշխատողներ:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, հիմնական դպրոց, որտեղ սովորում են 21 աշակերտներ:

Կան պատմամշակութային հուշարձաններ՝ ք.ա. II-I հազ. պատկանող դամբարաններ, հաշվառված է 14 հուշարձան:

Ջրամատակարարումն իրականացվում է պետության կողմից կենտրոնացված՝ ինքնահոս եղանակով, համակարգը սնվում է 2 ակունքներից: Համայնքի տարածքում կա 2 աղբյուր՝ «Շլորեն» և «Կապուտանի մոտ»: Խմելու ջրի համար առկա են նաև գործող արտեզյան 2 ջրհորներ:

Համայնքի տարածքով անցնում է «Բերքաձորի» ոռոգման ջրատարը:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով, առկա է նաև գազամատակարարման համակարգ:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Գործում է 2.5G բջջային կապի համակարգը, անլար հեռախոսակապն առկա է:

Ինտերնետ ծառայությունը հասանելի է (ապահովված է Wi-Fi ինտերնետ կապով):

Համայնքում գործում են առևտրի 2 օբյեկտներ:

Համայնքային ենթակայության ճանապարհները պատված են խճով և կոպճով, չմշակված կապակցող նյութերով:

Տրանսպորտային կապը կարգավորված է. ուղևորափոխադրումներն իրականացվում են Ասկերան-Ստեփանակերտ-Ասկերան միջշրջանային թիվ 101 կանոնավոր ավտոբուսային երթուղով (տարանցիկ):

Բերքաձորի համայնքային բյուջեի ծախսերի ֆինանսավորման աղբյուրներն են ընթացիկ եկամուտները և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը:

ԼՂՀ Ասկերանի շրջանի Դահրավ համայնքը

ԼՂՀ Ասկերանի շրջանի Դահրավ համայնքը տեղաբաշխված է հանրապետության կենտրոնական հատվածում: Ասկերան շրջկենտրոնից գտնվում է 18 կմ (23 այլ ճանապարհով) հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 19 կմ հեռավորության վրա:

Համայնքը լեռնային է, ունի 2155,3 հա տարածք, որից 1011,55 հա գյուղատնտեսական նշանակության, 1090,6 հա անտառային հողեր:

Դահրավ համայնքի սահմանային գոտով հոսում է Բաղարա գետը:

Դահրավ համայնքի բնակչության թվաքանակը կազմում է 179 մարդ, կա 68 տնտեսություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, հիմնական դպրոց, որտեղ սովորում են 15 աշակերտներ:

Կան պատմամշակութային հուշարձաններ՝ Սբ. Հովհաննես եկեղեցի (XIX դ.), գերեզմանոց (XVI-XIX դդ.), աղբյուր (XIX դ.), մատուռ (XII-XIII դդ.), որմնափակ խաչքար (1081 թ.), (1276.), Ռաֆֆու աղբյուր (1800 թ.), սրբատեղի (XVIII-XIX դդ.), «Սոեն նահատակ» եկեղեցի (XII-III դդ.), «Եղցահող» սրբավայր (XVII-XVIII դդ.):

Ջրամատակարարումն իրականացվում է համայնքի կողմից՝ ինքնահոս եղանակով, համակարգը սնվում է 2 ակունքներից: Համայնքի տարածքում առկա են թվով 13 աղբյուրներ՝ «Մովեն», «Կրմնջին», «Հարթեն», «Օրինած», «Ռաֆֆու», «Խաչ», «Խաչի հող», «Պիծի կյումեր», «Սիսեռն», «Սորթուն հորթ», «Սուրթեն երթ», «Նիկոսեն» և «Ումուղու»:

Համայնքն ապահովված է էլեկտրաէներգիայով:

Հեռուստատեսությունը և ռադիոն համայնքում հասանելի են:

Գործում է 2.5G բջջային կապի համակարգը, անլար հեռախոսակապն առկա է:

Ինտերնետ ծառայությունը հասանելի է (ապահովված է Wi-Fi ինտերնետ կապով):

Համայնքում գործում է առևտրի 1 օբյեկտ:

Համայնքային ենթակայության ճանապարհները պատված են խճով և կոպճով, չմշակված կապակցող նյութերով:

